ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ#1

2 ՀԱՏ ՍՏԱՑԻՈՆԱՐ ԹՎԱՅԻՆ ՌԱԴԻՈԳՐԱՖԻԱՅԻ և ՖԼՅՈՒՈՐՈՍԿՈՊԻԱՅԻ ՌԵՆՏԳԵՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԳՆՈՒՄ, ՆԵՐԱՌՅԱԼ ՏԵՂԱԴՐՈՒՄ, ՄԵԿՆԱՐԿ և ՈՒՍՈՒՑՈՒՄ, CR4/RFQ/D-G/035-20

Հարգելի Հայտատուներ,

Ի պատասխան, 2020թ-ի հունիսի 16 ARMEPS համակարգի միջոցով ստացված հարցմանը, կից Ձեզ ենք ներկայացնում հետևյալ պարզաբանումը վերոնշյալ մրցույթի վերաբերյալ («Գնառաջարկի հրավեր» 7-րդ կետ).

Հարց. Խնդրում ենք պարզաբանել, արդյոք պարտադիր պահանջ է ISO 14001 որակի հավաստագրի առկայությունը, քանի որ 6 հայտնի ռենտգեն արտադրողների հարցումների արդյունքում ստացել ենք նույն պատասխանը, որ այս սերտիֆիկատը ռենտգեն սարքավորումների արտադրման համար պարտադիր պայման չի և ավելին, այն որևէ կերպ չի վերաբերում կոնկրետ ռենտգեն սարքավորումներին և դրանց արտադրությանը: Խնդրում եմ նայել կից հղումը՝ https://www.iso.org/ru/standard/60857.html: Ռենտգեն սարքավորումներ արտադրող ընկերությունների մեծ մասը շրջակա միջավայրի անվտանգության նորմերը ապահովում են ISO13485, ISO9001 և/կամ CE հավաստագրերով:

Պատասխան. ISO 14001 որակի հավաստագրի առկայությունը պարտադիր է:

Հարց. Բացի այդ, խնդրում եմ հաստատել, արդյոք ընդունելի կլինի ռենտգենյան ճառագայթիչի պտույտը ոչ պակաս, քան 240°-ի փոխարեն ներկայացնել 180° պտույտով ճառագայթիչ, քանի որ մեզ հայտնի և մեր կողմից հարցված արտադրողներից և որևէ մի արտադրող չի ապահովում 240° պտույտը: Ավելին, հարցված բոլոր արտադրողները պնդում են, որ որևէ կլինիկական նշանակություն բնութագրիչի այս ցուցանիշը չունի, բոլոր հետազոտությունները մաքսիմալ արդյունավետությամբ հնարավոր է անցկացնել 180°-ի դեպքում: 240° պտույտով ճառագայթիչ, ըստ մեր տվյալների, ունեն միայն Siemens Healthcare ընկերության սարքերը:

Պատասխան. Համաձայն տեխնիկական բնութագրի, ռենտգենյան ճառագայթիչի պտույտը պետք է լինի ոչ պակաս, քան 240°: Բացի Ձեր կողմից նշված ընկերությունից, այլ արտադրողներ նույնպես նշած 180° պտույտը կարող են ավելացնել մինչև 270°՝ որպես հավելյալ տարբերակ:

Հարգանքով,
Քրիստինե Ղամբարյան
Գնումների մասնագետ
ՀՀ ԱՆ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ
ՀՀ, ք. Երևան 0051, Կոմիտասի 49/4, 5-րդ հարկ
Հեռ.՝ (+374 10) 29 75 36, (+374 10) 29 75 37
Էլ. հասցե՝ procurement@healthpiu.am, kristine.ghambaryan@healthpiu.am
Վեբկայք՝ www.healthpiu.am